ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ քիթ-կոկորդ-ականաջաբանական կաբինետի բուժքրոջ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

ՀՀ Կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:
Մրցութին մասնակցելու համար միջին բուժանձնակազմին ներկայացվող

1) պարտադիր պայմաններն են՝

ա.միջին մասնագիտական կրթության առկայություն
բ. բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

2) լրացուցիչ պայմաններն են՝

ա. համակարգչով աշխատելու ունակություն.
բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,
գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Թափուր տեղի հավակնորդի կողմից ներկայացվում է՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար 3x4 չափի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի, միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները,
6) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին անձնագրով /անձը հաստատող այլ փաստաթղթով/, նախատեսված փաստաթղթերի բնօրինակներով և պատճեններով անձամբ ներկայանում է << Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ի կադրերի բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից (ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, <<Անի>> թաղամաս 5 փողոց 8):
Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 18.12.2018թ.:

Քիթ-կոկորդ-ականաջաբանական կաբինետի բուժքրոջ պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 13:00-ին <<Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ի մասնաշենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել << Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ի աշխատանքային խմբին (ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, <<Անի>> թաղամաս 5 փողոց 8, հեռ. 6-17-60, 6-14-86):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: